Արձանագրություն N 6

Բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Протокол № 6

Заседания оценочной комиссии под кодом EQ-EAJApDzB-24/126

ք. Երևան 27.06.2024թ. Ժամը՝ 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Կարապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Սեթյան, Ա. Զոհրաբյան /բացակա/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Участвовали:

Председатель комиссии: Д.Карапетян

Члены комиссии: А. Зограбян /отсутствует/, М. Сетян

Секретарь комиссии: И. Егиазарян

1. ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը դադարեցման մասին

27.06.2024 թ. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից ստացվել է գրություն, այն է.

«Հայցվորը 06.06.2024թ. ներկայացրել է գործի վարույթը կարճելու մասին միջնորդություն:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝գործի վարույթը կարճելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Քաղաքացիական դատավարության Օրենսգրքի 234.12 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Դատարանը կայացրել է «Գործի վարույթը կարճելու մասին» որոշում՝ հայցից հրաժարվելու հիմքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը հայտնում եմ, որ թիվ ԵԴ2/3485/02/24 քաղաքացիական գործի վարույթի հարուցմամբ պայմանավորված թիվ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126 ծածկագրով գնման գործընթացի կասեցումը, գործի վարույթի կարճմամբ համարվում է վերացված:»

1.1 Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով վերոգրյալը և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից ընդունված որոշումը՝ ԵԴ2/3485/02/24 քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, որոշեց ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման գործընթացը շարունակել:

2. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126» ծածկագրով գնման ընթացակարգի անհամապատասխանության շտկման վերաբերյալ

Դ. Կարապետյան

2.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում **Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ի** կողմից անհամապատասխանությունները շտկվել են:

Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 42-րդ կետով, որոշեց մասնակցի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ - 0:

2.. Об исправление несоответствие процедуру закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/126»

Д.Карапетян

2.1 Принять к сведению в течение указанного периода несоответствии было исправлено участником ООО «Ар.медтехника».

Принято решение: за- 2, против-0

3.. էլեկտրոնային աճուրդի ընտրված մասնակիցների մասին

Դ. Կարապետյան

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել՝ **Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ի-ն,** որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացված մասնակից:

3.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2 դեմ-0

3. Об участниках, занявших первые места в процедуре

Д.Карапетян

3,1 Решением оценочной комиссии участники процедуры, занявший первое место был признан ООО «Ар.медтехника».

3.2 Утвердить текст объявления о решении заключения договора.

Принято решение: за-2, против-0

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Կարապետյան
Председатель комиссии Д.Карапетян

Անդամներ՝ Ա. Զոհրաբյան
Члены комиссии А. Зограбян

Մ. Սեթյան
М. Сетян

Քարտուղար՝ Ի. Եղիազարյան
Секретарь комиссии И. Егиазарян